ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 1551-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հարապետության վարչապետի 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 1162-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ընտրված ոլորտների օրենսդրությունը Եվրամիության մակարդակում կանոնակարգվող արդյունաբերական ոլորտների օրենսդրությանը մոտարկման ծրագրի 1-ին կետը և «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել խաղալիքների անվտանգության տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 22-ի «Խաղալիքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1551-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու տարի 6 ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
------ ---------- N - Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են խաղալիքների անվտանգության և Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց ազատ տեղաշարժի կանոնները:

2. Սույն տեխնիկական կանոնակարգը տարածվում է այն արտադրանքի վրա, որը ստեղծված է կամ նախատեսված է մինչև 14 տարեկան երեխաների կողմից խաղերում օգտագործելու համար (այսուհետ խաղալիքներ)՝ բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետում նշված խաղալիքների:

1) Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում Ձև I-ում նշված՝ սույն տեխնիկական կանոնակարգի շրջանակներում խաղալիք չհամարվող արտադրանքի վրա:

2) Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում հետևյալ խաղալիքների վրա՝

ա. հանրային օգտագործման համար նախատեսված խաղահրապարակների սարքավորումներ,

բ. հանրային օգտագործման համար նախատեսված, մետաղադրամով կամ առանց դրա աշխատեցվող ավտոմատ խաղային մեքենաներ,

գ. այրման շարժիչներով գործող խաղալիք ավտոմեքենաներ,

դ. խաղալիք շոգեշարժիչներ,

ե. պարսատիկներ և կատապուլտներ:

3. Սույն տեխնիկական կանոնակարգի իմաստով կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1)**հասանելի դարձնել շուկայում՝** Հայաստանի Հանրապետության շուկայում սպառման, օգտագործման կամ բաշխման համար նախատեսված խաղալիքի վճարովի կամ անվճար ցանկացած մատակարարումը, որն իրականացվում է առևտրային գործունեության ընթացքում

2)**շուկայահանում՝** նոր խաղալիքի մուտքը (հասանելի դարձնելը) Հայաստանի Հանրապետության շուկայում

3)**արտադրող՝** ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը նախագծում և (կամ) արտադրում է խաղալիք կամ ունի նախագծված և (կամ) արտադրված խաղալիք՝ սեփական անվանմամբ կամ իր ապրանքային նշանի անվանմամբ՝ շուկայահանման նպատակով

4)**ներմուծող՝** ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում, իրականացնում է արտադրանքի(բացառությամբ՝ ֆիզիկական անձանց կողմից անձնական սպառման նպատակով ներկրված արտադրանքից) ներսբերումը Հայաստանի Հանրապետության տարածք՝ հետագա շուկայահանման նպատակով

5)**լիազոր ներկայացուցիչ՝** Հայաստանի Հանրապետությունում գրանցված ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն արտադրողի կողմից ստացել է իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան

6)**դիստրիբյուտոր՝** մատակարարման շղթայում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը չի հանդիսանում ոչ արտադրող, ոչ ներմուծող և խաղալիքը հասանելի է դարձնում շուկայում

7)**տնտեսավարող սուբյեկտ՝** արտադրող կամ նրա՝ Հայաստանի Հանրապետությունում գործող լիազոր ներկայացուցիչ, ներմուծող և դիստրիբյուտոր

8)**համապատասխանության գնահատում՝** գործընթաց, որով հավաստվում է խաղալիքի համար սահմանված պահանջների կատարումը

9)**համապատասխանության գնահատման մարմին**՝ մարմին, որը համապատասխանության գնահատման ծառայություն է մատուցում՝ տրամաչափարկման, փորձարկման, սերտիֆիկացման և տեխնիկական հսկողության միջոցով

10) **խաղալիքի հետկանչում՝** ցանկացած միջոցառում, որի նպատակն է ապահովել վերջնական օգտագործողին հասանելի դարձած խաղալիքի վերադարձը

11)**շրջանառությունից հանելը՝** ցանկացած միջոցառում, որի նպատակն է կանխել մատակարարման շղթայում խաղալիքի շուկայում հասանելի դարձնելը

12)**շուկայի վերահսկողություն**՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերասկողություն իրականացնող իրավասու մարմնի (այսուհետ՝ Շուկայի վերասկողության մարմին) կողմից իրականացվող գործունեություն, ինչպես նաև այդ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումներ, որոնք երաշխավորում են խաղալիքի համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին և չեն վտանգում մարդու առողջությունը, անվտանգությունը, հանրային շահերի պաշտպանությունը

13)**համապատասխանության ազգային նշանով մակնշում՝** մակնշում, որով արտադրողը ցույց է տալիս խաղալիքի համապատասխանությունը մակնշման ամրակցումը նախատեսող տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին

14)**ֆունկցիոնալ արտադրանք**՝ արտադրանք, որը գործում կամ օգտագործվում է նույն կերպ, ինչպես մեծահասակների կողմից օգտագործման համար նախատեսված արտադրանքը, սարքը կամ հարմարանքը և կարող է լինել այդ արտադրանքի, սարքի կամ հարմարանքի փոքրացված մանրատիպը

15)**ֆունկցիոնալ խաղալիք**՝ խաղալիք, որը գործում է կամ օգտագործվում է նույն կերպ, ինչպես մեծահասակների կողմից օգտագործման համար նախատեսված արտադրանքը, սարքը կամ հարմարանքը և կարող է լինել այդ արտադրանքի, սարքի կամ հարմարանքի փոքրացված մանրատիպը

16)**ջրային խաղալիք**՝ խաղալիք, որը նախատեսված է ծանծաղ ջրում օգտագործման համար և կարող է տեղափոխել կամ պահել երեխային ջրի վրա

17)**նախագծման արագություն՝** խաղալիքի նախագծով նախատեսված ներկայացուցչական պոտենցիալ գործածության արագություն

18)**գործող խաղալիք**՝ տանը օգտագործելու համար նախատեսված խաղալիք՝ երեխայի կողմից մագլցելու, ցատկելու, տարուբերվելու, սահելու, ճոճվելու, պտտվելու, չորեքթաթ գնալու, սողալու կամ դրանցից որևէ մեկի/մի քանիսի համադրված գործողությունների կատարման համար, որի ընթացքում խաղալիքի պահող կառույցը մնում է անշարժ

19)**քիմիական խաղալիք՝** խաղալիք, որը նախատեսված է անմիջապես քիմիական նյութերի և խառնուրդների հետ աշխատելու համար և օգտագործվում է մեծահասակի վերահսկողության ներքո՝ տարիքային խմբին համապատասխան

20)**հոտառական խաղատախտակ՝** խաղալիք, որի նպատակն է օգնել երեխային սովորելու ճանաչել տարբեր հոտեր կամ բույրեր

21)**օծանելիքային հավաքածու՝** խաղալիք՝ ուղղված այնպիսի արտադրանքի պատրաստման ուսուցանմանը, ինչպիսիք են օծանելիքը, օճառը, քսուքը, շամպունը, լոգանքի փրփուրը, փայլը, շրթներկը, դիմահարդարման այլ միջոցներ, ատամի մածուկը և կոնդիցիոները

22)**խոհարարական խաղ՝** խաղալիք, որի նպատակն է երեխաներին հնարավորություն տալ պատրաստելու քաղցրավենիք կամ ճաշատեսակներ, որոնք նախատեսում են սննդի այնպիսի բաղադրիչների օգտագործումը, ինչպիսիք են՝ քաղցրեղենը, հեղուկները, փոշիները և բույրերը

23)**վնաս՝** ֆիզիկական վնասվածք կամ ցանկացած այլ վնաս առողջությանը, այդ թվում՝ երկարաժամկետ ազդեցություններ առողջության վրա

24)**վտանգ՝** վնասի պոտենցիալ աղբյուր

25)**ռիսկ՝** վնաս առաջացնող վտանգի հավանականության և վնասի ծանրության աստիճանի համադրություն

26)**օգտագործման համար նախատեսում՝** ծնողի կամ վերահսկողի կողմից ողջամտորեն պոտենցիալ եզրակացություն՝ ըստ խաղալիքի գործառույթների, չափերի

և բնութագրերի՝ խաղալիքի մակնշմամբ նշված տարիքային խմբի երեխաների կողմից օգտագործման համար:

ԳԼՈՒԽ II. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.Արտադրողի պարտավորություններն են՝

1) Արտադրողը իր կողմից արտադրված խաղալիքները շուկայահանելիս պարտավոր է երաշխավորել, որ դրանք նախագծվել և արտադրվել են Ձև II-ում և 4-րդ գլխի 10-րդ կետում սահմանված պահանջների համաձայն:

2) Արտադրողը պարտավոր է կազմել պահանջվող տեխնիկական փաստաթղթեր՝ համաձայն սույն կանոնակարգի 19-րդ կետի, և իրականացնել կամ պատվիրակել սույն կանոնակարգի 17-րդ կետով նախատեսված համապատասխանության գնահատման ընթացակարգի իրականացում:

Այդ ընթացակարգով սահմանված պահանջներին խաղալիքի համապատասխանության դեպքում արտադրողը պարտավոր է կազմել համապասխանության հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի 17-րդ կետի և ամրակցել ՀՏԿ մակնշվածքը՝ սույն կանոնակարգի 19-րդ կետի 1-ին ենթակետի կանոններին համաձայն:

3) Արտադրողը խաղալիքը շուկայահանելու օրվանից հետո 10 տարվա ընթացքում պարտավոր է պահպանել տեխնիկական փաստաթղթերը և համապասխանության հայտարարագիրը:

4) Արտադրողը պարտավոր է ապահովել արտադրանքի սերիական արտադրության համապատասխանության համար նախատեսված ընթացակարգերի առկայությունը: Պետք է համապատասխան կերպով հաշվի առնվեն նաև խաղալիքի նախագծի կամ բնութագրիչների և այն ստանդարտների փոփոխությունները, որոնց հղում կատարելով հայտարարագրվում է խաղալիքի համապատասխանությունը:

Խաղալիքից առաջացող ռիսկերի դեպքում սպառողների առողջության և անվտանգության պաշտպանության նպատակով արտադրողը, ըստ նպատակահարմարության, պետք է իրականացնի շուկայահանված խաղալիքների նմուշի փորձարկում, հետաքննություն և, անհրաժեշտության դեպքում, վարի

բողոքների, սահմանված պահանջներին չհամապատասխանող և հետկանչված խաղալիքների գրանցամատյան, ինչպես նաև տեղեկացնի դիստրիբյուտորներին ցանկացած նման մշտադիտարկման մասին:

5) Արտադրողը պարտավոր է երաշխավորել, որ իր կողմից արտադրված խաղալիքի վրա նշված է տվյալ խաղալիքի տեսակը, խմբաքանակը, սերիական կամ մոդելի համարը կամ այլ տարրեր, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել խաղալիքները: Այն դեպքում, երբ խաղալիքի չափը կամ բնույթը դա թույլ չի տալիս, ապա պահանջվող տեղեկատվությունը պետք է տրվի փաթեթվածքի վրա կամ խաղալիքն ուղեկցող փաստաթղթերում:

6) Արտադրողը պարտավոր է խաղալիքի վրա կամ ,եթե դա հնարավոր չէ, դրա փաթեթվածքի կամ դրան ուղեկցող փաստաթղթի վրա նշել իր անունը, գրանցված առևտրային անունը կամ առևտրային նշանը և միայն մեկ հասցե, որով խաղալիքի հետ կապված հարցերով կարելի է նրա հետ կապ հաստատել:

7) Արտադրողը պարտավոր է երաշխավորել, որ խաղալիքն ուղեկցվում է հայերեն լեզվով գրված հրահանգներով և անվտանգության տեղեկատվությամբ:

8) Արտադրողի կողմից արտադրված և շուկայահանված խաղալիքի՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությանը չհամապատասխանելու կասկածի դեպքում արտադրողը պետք է անհապաղ ձեռնարկի անհրաժեշտ ուղղիչ միջոցառումներ՝ խաղալիքը համապատասխանության բերելու և ըստ նպատակահարմարության՝ շրջանառությունից հանելու կամ շուկայից հետկանչելու համար: Եթե խաղալիքը նաև ռիսկ է ներկայացնում, ապա արտադրողը պետք է անհապաղ տեղեկացնի Շուկայի վերահսկողության մարմին՝ տրամադրելով մանրամասն տեղեկություններ անհամապատասխանության և ցանկացած ձեռնարկված ուղղիչ միջոցառումների մասին:

9) Արտադրողը պարտավոր է իրավասու պետական մարմնի կողմից ներկայացրած հիմնավորված գրավոր դիմումի հիման վրա վերջինիս հայերեն լեզվով տրամադրել խաղալիքի համապատասխանությունը ապացուցող բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը: Արտադրողը պետք է համագործակցի իրավասու

պետական մարմնի հետ վերջինիս դիմումի հիման վրա շուկայահանված խաղալիքներից առաջացած ռիսկերը վերացնելու ցանկացած գործողության հարցում:

5.Լիազոր ներկայացուցչին ներկայացվող պահանջներն են՝

1) Արտադրողը կարող է իր գրավոր թույլտվությամբ նշանակել լիազոր ներկայացուցիչ:

2) Սույն կանոնակարգի 4-րդ կետի 1-ին ենթակետում սահմանված պարտավորությունները և տեխնիկական փաստաթղթերի կազմումը չեն կարող ներառվել լիազոր ներկայացուցչին տրվող գրավոր թույլտվության շրջանակում:

3) Լիազոր ներկայացուցիչը պարտավոր է կատարել արտադրողից ստացած գրավոր թույլտվության մեջ նշված առաջադրանքները: Գրավոր թույլտվությունը լիազոր ներկայացուցչին թույլ է տալիս կատարել առնվազն հետևյալը.

ա. պահպանել համապատասխանության հայտարարագիրը և տեխնիկական փաստաթղթերը Շուկայի վերասկողության մարմին ներկայացնելու համար խաղալիքը շուկայահանելուց հետո 10 տարի ժամկետով,

բ. Շուկայի վերասկողության մարմնի կողմից հիմնավորված դիմումի հիման վրա՝ այդ մարմնին տրամադրել խաղալիքի համապատասխանությունը հավաստող ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը,

գ. համագործակցել իրավասու պետական մարմինների հետ՝ վերջիններիս դիմումի հիման վրա և իրեն տրված գրավոր թույլտվության շրջանակներում ներառված խաղալիքի ներկայացրած ռիսկերը վերացնելու նպատակով ձեռնարկված ցանկացած գործողության հարցում:

6.Ներմուծողի պարտավորություններն են՝

1) Ներմուծողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության շուկա հանել միայն սահմանված պահանջներին համապատասխանող խաղալիքներ:

2) Նախքան խաղալիքի շուկայահանումը ներմուծողը պետք է համոզված լինի, որ արտադրողի կողմից իրականացվել է սահմանված համապատասխանության գնահատման ընթացակարգը:

Ներմուծողը պետք է համոզված լինի, որ արտադրողը կազմել է տեխնիկական փաստաթղթերը, որ խաղալիքը կրում է պահանջվող համապատասխանության նշանը և ուղեկցվում է պահանջվող փաստաթղթերով, ինչպես նաև որ արտադրողի կողմից բավարարված են սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված պահանջները:

Ներմուծողի կողմից խաղալիքի՝ սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետի և Ձև II-ի չհամապատասխանելու կասկածի դեպքում, մինչև համապատասխանության բերելը, ներմուծողը չպետք է շուկայահանի խաղալիքը: Ավելին, այն դեպքում, երբ խաղալիքը ռիսկ է ներկայացնում, ներմուծողը պետք է դրա մասին տեղեկացնի արտադրողին և Շուկայի վերասկողության մարմին:

3) Ներմուծողը պարտավոր է խաղալիքի կամ, եթե դա հնարավոր չէ, ապա դրա փաթեթվածքի կամ դրան ուղեկցող փաստաթղթի վրա նշել իր անունը, գրանցված առևտրային անունը կամ առևտրային նշանը և հասցեն, որով խաղալիքի հետ կապված հարցերով կարելի է նրա հետ կապ հաստատել:

4) Ներմուծողը պարտավոր է երաշխավորել, որ խաղալիքն ուղեկցվում է հայերեն լեզվով հրահանգներով և անվտանգության տեղեկատվությամբ:

5) Ներմուծողը պետք է ապահովի, որ խաղալիքի՝ իր պատասխանատվության ներքո գտնվելու ընթացքում պահեստավորման կամ փոխադրման պայմանների համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետով և Ձև II-ով սահմանված պահանջներին վտանգված չէ:

6) Խաղալիքից առաջացող ռիսկերի դեպքում սպառողների առողջության և անվտանգության պաշտպանության նպատակով ներմուծողը, ըստ նպատակահարմարության, պետք է իրականացնի շուկայահանված խաղալիքների նմուշի փորձարկում, հետաքննություն և, անհրաժեշտության դեպքում, վարի բողոքների, սահմանված պահանջներին չհամապատասխանող և հետկանչված խաղալիքների գրանցամատյան, ինչպես նաև տեղեկացնի դիստրիբյուտորներին ցանկացած նման մշտադիտարկման մասին:

7) Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությանը ներմուծողի կողմից շուկայահանված խաղալիքի չհամապատասխանելու կասկածի դեպքում ներմուծողը պետք է անհապաղ անհրաժեշտ ուղղիչ միջոցառումներ ձեռնարկի խաղալիքը համապատասխանության բերելու և, ըստ նպատակահարմարության, շրջանառությունից հանելու կամ շուկայից հետ կանչելու համար:

Եթե խաղալիքը նաև ռիսկ է ներկայացնում, ներմուծողը պետք է անհապաղ տեղեկացնի Շուկայի վերասկողության մարմնին՝ տրամադրելով մանրամասն տեղեկություններ անհամապատասխանության և ցանկացած ձեռնարկված ուղղիչ միջոցառումների մասին:

8) Ներմուծողը պարտավոր է խաղալիքը շուկայահանելուց հետո 10 տարի ժամկետով պահպանել համապատասխանության հայտարարագրի մեկ օրինակը և տեխնիկական փաստաթղթերը՝ Շուկայի վերասկողության մարմնին իր խնդրանքով ներկայացնելու համար:

9) Ներմուծողը պարտավոր է իրավասու պետական մարմնի կողմից ներկայացրած հիմնավորված գրավոր դիմումի հիման վրա վերջինիս հայերեն լեզվով տրամադրել խաղալիքի համապատասխանությունը ապացուցող բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը: Ներմուծողը պետք է համագործակցի այդ մարմնի հետ վերջինիս դիմումի հիման վրա՝ շուկայահանված խաղալիքներից առաջացած ռիսկերը վերացնելու ցանկացած գործողության հարցում:

7.Դիստրիբյուտորի պարտավորություններն են՝

1) Խաղալիքը շուկայում հասանելի դարձնելու ժամանակ դիստրիբյուտորը պարտավոր է պատշաճ ուշադրություն դարձնել կիրառելի պահանջներին:

2) Նախքան խաղալիքը շուկայում հասանելի դարձնելը դիստրիբյուտորը պարտավոր է ստուգել խաղալիքի վրա պահանջվող համապատասխանության նշանի, հայերեն լեզվով ուղեկցվող պահանջվող փաստաթղթերի, հրահանգների և անվտանգության մասին տեղեկությունների առկայությունը և արտադրողի ու

ներմուծողի կողմից սույն կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ, 6-րդ ենթակետերում և 6-րդ կետի 3-րդ ենթակետում սահմանված պահանջների կատարումը:

Դիստրիբյուտորի կողմից խաղալիքի սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետի և Ձև II-ի չհամապատասխանելու կասկածի դեպքում, մինչև համապատասխանության բերելը, դիստրիբյուտորը չպետք է շուկայահանի խաղալիքը: Ավելին, այն դեպքում, երբ խաղալիքը ռիսկ է ներկայացնում, դիստրիբյուտորը պետք է դրա մասին տեղեկացնի արտադրողին կամ ներմուծողին, ինչպես նաև Շուկայի վերասկողության մարմնին:

3) Դիստրիբյուտորը պետք է ապահովի, որ խաղալիքի՝ իր պատասխանատվության ներքո գտնվելու ընթացքում պահեստավորման կամ փոխադրման պայմանների համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետով և Ձև II-ով սահմանված պահանջներին վտանգված չէ:

4) Դիստրիբյուտորի կողմից շուկայահանված խաղալիքի՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությանը չհամապատասխանելու կասկածի դեպքում դիստրիբյուտորը պետք է անհապաղ անհրաժեշտ ուղղիչ միջոցառումներ ձեռնարկի՝ խաղալիքը համապատասխանության բերելու և, ըստ նպատակահարմարության, շրջանառությունից հանելու կամ շուկայից հետկանչելու համար:

Եթե խաղալիքը նաև ռիսկ է ներկայացնում, դիստրիբյուտորը պետք է անհապաղ տեղեկացնի Շուկայի վերասկողության մարմնին՝ տրամադրելով մանրամասն տեղեկություններ անհամապատասխանության և ցանկացած ձեռնարկված ուղղիչ միջոցառումների մասին:

5) Դիստրիբյուտորը պարտավոր է իրավասու պետական մարմնի կողմից ներկայացրած հիմնավորված գրավոր դիմումի հիման վրա վերջինիս հայերեն լեզվով տրամադրել խաղալիքի համապատասխանությունը ապացուցող բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը: Դիստրիբյուտորը պետք է համագործակցի այդ մարմնի հետ վերջինիս դիմումի հիման վրա՝ շուկայահանված խաղալիքներից առաջացած ռիսկերը վերացնելու ցանկացած գործողության հարցում:

8. Ներմուծողի և դիստրիբյուտորի վրա տարածվում են արտադրողի հետևյալ պարտավորությունները՝

սույն տեխնիկական կանոնակարգի իմաստով արտադրող է համարվում այն ներմուծողը կամ դիստրիբյուտորը և միևնույն ժամանակ ստանձնում է սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ կետով սահմանված արտադրողի պարտավորությունները այն դեպքում, երբ իր անվան կամ առևտրային նշանի ներքո խաղալիք է շուկայահանում կամ փոփոխում է արդեն շուկայահանված խաղալիքն այնպես, որ դա կարող է ազդել կիրառելի պահանջներին համապատասխանության վրա:

9.Տնտեսվարող սուբյեկտը շուկայի վերահսկողության մարմնի հարցման դեպքում պետք է նույնականացնի հետևյալը ՝

1) ցանկացած տնտեսվարողի, որը իրենց խաղալիք է մատակարարել,

2) ցանկացած տնտեսվարողի, ում իրենք խաղալիք են մատակարարել:

Արտադրողը պետք է կարողանա ներկայացնել առաջին մասում նշված տեղեկատվությունը խաղալիքի շուկայահանման օրվանից հետո 10 տարվա ընթացքում, իսկ այլ տնտեսվարող սուբյեկտը՝ խաղալիքն իրեն մատակարարվելուց հետո 10 տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ III. ԽԱՂԱԼԻՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

10.Անվտանգության հիմնական պահանջներն են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է ձեռնարկի հիմնական անվտանգության պահանջներին չհամապատասխանող խաղալիքի շուկայահանումը կանխելու համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները, ընդ որում ընդհանուր անվտանգության պահանջները ներկայացված են 2-րդ ենթակետում, իսկ որոշակի անվտանգության պահանջները՝ սույն կանոնակարգի Ձև II-ում:

2) Խաղալիքը, ներառյալ դրանում պարունակվող քիմիական նյութերը, չպետք է ըստ նշանակության կամ նախատեսված ձևով օգտագործելիս, հաշվի առնելով նաև

երեխաների վարքը, վտանգի օգտագործողի կամ երրորդ կողմի առողջությունը կամ անվտանգությունը:

Պետք է հաշվի առնել օգտագործողի և, որտեղ որ նպատակահարմար է, նրա վերահսկողի կարողությունը՝ մասնավորապես մինչև 36 ամսական կամ այլ սահմանված տարիքային խմբերի երեխաների կողմից օգտագործման համար նախատեսված խաղալիքի դեպքում: Սույն տեխնիկական կանոնակարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ ամրակցված պիտակները և խաղալիքն ուղեկցող օգտագործման հրահանգները պետք է հրավիրեն օգտագործողի կամ նրա վերահսկողի ուշադրությունը խաղալիքի օգտագործման հետ կապված բնորոշ վտանգների և վնասի ռիսկերի, ինչպես նաև նմանատիպ վտանգներից և ռիսկերից խուսափելու ուղիների վրա:

3) Շուկայահանված խաղալիքը դրա օգտագործման համար նախատեսված ժամկետի ողջ ընթացքում պետք է համապատասխանի հիմնական անվտանգության պահանջներին:

11. Նախազգուշացումներին առնչվող հարցերն են՝

1) Խաղալիքի անվտանգ օգտագործման նպատակահարմարությունից ելնելով՝ սույն կանոնակարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի իմաստով նախազգուշացումները պետք է մատնանշեն օգտագործողի սահմանափակումները՝ սույն կանոնակարգի V-րդ Ձևի Ա մասի դրույթների համաձայն:

Ինչ վերաբերում է սույն կանոնակարգի V Ձևի Բ մասում թվարկված խաղալիքների կատեգորիաներին, ապա դրանց համար կկիրառվեն նշված մասում սահմանված նախազգուշացումները: Սույն կանոնակարգի V Ձևի Բ մասի 2-10-րդ կետերում նշված նախազգուշացումները պետք է օգտագործվեն այնպես, ինչպես դրանք ձևակերպված են այդ կետերում:

Խաղալիքը չի կարող կրել սույն կանոնակարգի V Ձևի Բ մասում սահմանված մեկ կամ ավելի հատուկ նախազգուշացումներ, որոնք հակասում են նրա նպատակային օգտագործմանը՝ պայմանավորված խաղալիքի գործառույթով, չափով և բնութագրով:

2) Արտադրողը պարտավոր է խաղալիքի, ամրակցված պիտակի կամ նրա փաթեթվածքի և, անհրաժեշտության դեպքում, խաղալիքն ուղեկցող օգտագործման հրահանգներում նախազգուշացումները նշել հայերեն լեզվով հստակ տեսանելի, հեշտ ընթեռնելի, հասկանալի և ճշգրիտ: Համապատասխան նախազգուշացումները պետք է ամրակցված լինեն այն փոքր խաղալիքների վրա, որոնք վաճառվում են առանց փաթեթավորման:

Նախազգուշացումներին պետք է նախորդեն «Նախազգուշացում» կամ «Նախազգուշացումներ» բառերը:

Այն նախազգուշացումը, որը որոշիչ գործոն է հանդիսանում խաղալիքի ձեռքբերման որոշումը կայացնելու ժամանակ, օրինակ՝ օգտագործողի նվազագույն և առավելագույն տարիքը սահմանող նախազգուշացումը և սույն կանոնակարգի V-րդ Ձևում սահմանված այլ կիրառելի նախազգուշացումները պետք է լինեն սպառողին հասանելի փաթեթվածքի վրա կամ այլ կերպ հստակ տեսանելի լինեն սպառողին գնումից առաջ, ներառյալ այն դեպքերը, երբ գնումը կատարվում է առցանց:

12.Համապատասխանության կանխավարկածը կիրառելի է ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից հրապարակված ստանդարտներին կամ դրանց մասերին համապատասխանող խաղալիքի նկատմամբ, որը կհամարվի համապատասխան սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետում և Ձև II-ում նշված այդ ստանդարտներում կամ դրանց մասերում սահմանված պահանջներին:

13. Համապատասխանության հայտարարագրին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

1) Համապատասխանության հայտարարագրում պետք է նշվի, որ սույն կանոնակարգի 10-րդ կետում և Ձև II-ում սահմանված պահանջները բավարարված են:

2) Համապատասխանության հայտարարագիրը պետք է առնվազն պարունակի սույն կանոնակարգի Ձև III-ում նշված տարրերը և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված համապատասխանության գնահատման կիրառելի ընթացակարգը, և այն պետք է շարունակաբար թարմացվի:

Հայտարարագիրը պետք է ունենա սույն կանոնակարգի Ձև III-ում նշված օրինակելի կառուցվածքը:

3) Հայաստանի Հանրապետությունում շուկայահանվող խաղալիքի համապատասխանության հայտարարագիրը պետք է լինի հայերեն լեզվով: Կազմելով համապատասխանության հայտարարագիրը՝ արտադրողը պարտավորություն է ստանձնում խաղալիքի՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության համար:

14.ՀՏԿ մակնշման ընդհանուր սկզբունքներն են՝

1) Շուկայում հասանելի դարձած խաղալիքը պետք է կրի ՀՏԿ մակնշում:

2) ՀՏԿ մակնշումը պետք է համապատասխանի ազգային նշանի կիրառման կանոններին:

3) ՀՏԿ-ով մակնշված խաղալիքը համարվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող:

4) Այն խաղալիքը, որը չունի ՀՏԿ մակնշում կամ որը սույն կանոնակարգի պահանջներին որևէ անհամապատասխանություն ունի, կարող է ցուցադրվել և օգտագործվել առևտրային տոնավաճառներում և ցուցահանդեսներում այն պայմանով, որ այն ուղեկցվում է սույն կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության ցուցանակով և վերջինս չպետք է հասանելի դառնա Հայաստանի Հանրապետության շուկայում մինչև անհամապատասխանության վերացումը:

15.ՀՏԿ մակնշման ամրակցման կանոնները և պայմանները հետևյալն են՝

1) խաղալիքի, նրա պիտակի կամ փաթեթվածքի վրա ՀՏԿ մակնշումը պետք է լինի տեսանելի, ընթեռնելի և չջնջվող: Փոքր խաղալիքի և փոքր մասերից կազմված խաղալիքի ՀՏԿ մակնշումը կարող է դրվել պիտակի կամ ուղեկցող թերթիկի վրա: Այն դեպքում, երբ խաղալիքը տեխնիկապես հնարավոր չէ մակնշել և վաճառվում է վաճառասեղանին ցուցադրման նպատակով օգտագործված հիմքի վրա, որը ի սկզբանե ծառայել է որպես փաթեթվածք խաղալիքի համար, ՀՏԿ մակնշումը կարելի է դնել նշված հիմքի վրա:

Այն դեպքում, երբ ՀՏԿ մակնշումը փաթեթվածքից դուրս տեսանելի չէ, սակայն առկա է, ապա այն առնվազն պետք է դրվի փաթեթվածքի վրա:

2) ՀՏԿ պետք է մակնշվի նախքան խաղալիքի շուկայահանումը: Մակնշումից հետո կարող է դրվել պիկտոգրամմա կամ որևէ հատուկ օգտագործում կամ ռիսկ մատնանշող այլ նշան:

ԳԼՈՒԽ IV ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

16. Նախքան խաղալիքի շուկայահանումը արտադրողը պարտավոր է կատարել խաղալիքի քիմիական, ֆիզիկական, մեխանիկական, էլեկտրական, դյուրավառության, հիգիենիկ և ռադիոակտիվության հնարավոր վտանգների վերլուծություն, ինչպես նաև նմանատիպ վտանգների նկատմամբ պոտենցիալ խոցելիության գնահատում:

17.Համապատասխանության գնահատման կիրառվող ընթացակարգերն են՝

1) Նախքան խաղալիքը շուկայահանելն արտադրողը պարտավոր է օգտագործել սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգերը՝ սույն կանոնակարգի 10-րդ կետում և Ձև II-ում սահմանված պահանջներին համապատասխանությունը ցույց տալու նպատակով:

2) Եթե արտադրողը կիրառել է ստանդարտներ, որոնց համարները հրապարակվել են ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից և որոնք ներառում են խաղալիքի բոլոր անվտանգության պահանջները, ապա պարտավոր է օգտագործել ՀՀ կառավարության ---- որոշմամբ հաստատված մոդուլ Ա-ում սահմանված ներքին արտադրության վերահսկողության ընթացակարգ:

3) Խաղալիքը պետք է ներկայացվի սույն տեխնիկական կանոնակարգի կետ 18-ում նշված տեխնիկական հսկողության (փորձաքննության) ՀՀ կառավարության ---- որոշմամբ հաստատված մոդուլ Գ-ով սահմանված տեսակի համապատասխանության ընթացակարգի հետ մեկտեղ հետևյալ դեպքերում ՝

ա. երբ չկան խաղալիքի համապատասխան անվտանգության բոլոր պահանջները ներառող ստանդարտներ, որոնց համարները հրապարակվել են ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից,

բ. երբ սույն կետի ա. ենթակետում նշված ստանդարտներն առկա են, սակայն արտադրողը դրանք չի կիրառել կամ կիրառել է մասամբ,

գ. երբ սույն կետի ա. ենթակետում նշված մեկ կամ ավելի ստանդարտներ հրապարակվել են սահմանափակումով,

դ. երբ արտադրողը գտնում է, որ խաղալիքի բնույթը, նախագիծը, կոնստրուկցիան կամ նպատակը առաջացնում է երրորդ կողմի ստուգման անհրաժեշտություն:

18.Տեխնիկական հսկողությունն (փորձաքննություն) իրականացվում է հետևյալ կերպ՝

1) Խաղալիքի տեխնիկական հսկողության հայտը, փորձաքննության իրականացումը և արտադրանքի տեխնիկական հսկողության սերտիֆիկատի տրամադրումը պետք է իրականացվի ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված մոդուլ Բ-ում սահմանված ընթացակարգերին համաձայն:

Խաղալիքի տեխնիկական հսկողությունը պետք է կատարվի մոդուլ Բ-ի 29.2 ենթակետում սահմանված կարգին համապատասխան:

Բացի նշված դրույթներից, պետք է կիրառվեն կանոնակարգի սույն կետի 2-րդ ենթակետից մինչև 5-րդ ենթակետերում սահմանված պահանջները:

2) Խաղալիքի տեխնիկական հսկողություն իրականացնելու հայտում պետք է նշվի խաղալիքի նկարագրությունը և արտադրման վայրը, ներառյալ հասցեն:

3) Այն դեպքում, երբ սույն տեխնիկական կանոնակարգի 20-րդ կետին համապատասխան համապատասխանության գնահատման նշանակված մարմինը (այսուհետ՝ նշանակված մարմին) իրականացնում է տեխնիկական հսկողություն, վերջինս, ըստ անհրաժեշտության, արտադրողի հետ համատեղ պետք է գնահատի արտադրողի կողմից սույն կանոնակարգի 16-րդ կետի համաձայն կատարված խաղալիքի համար հնարավոր վտանգների վերաբերյալ վերլուծությունը:

4) Տեխնիկական հսկողության սերտիֆիկատը պետք է ներառի հղում սույն տեխնիկական կանոնակարգին, խաղալիքի գունավոր պատկերը, պարզ

նկարագրությունը՝ ներառյալ նրա չափսերը, իրականացված փորձարկումների ցանկը՝ համապատասխան փորձարկումների արձանագրությունների հղումների հետ մեկտեղ:

Տեխնիկական հսկողության սերտիֆիկատը պետք է վերանայվի յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության, մասնավորապես՝ խաղալիքի արտադրության գործընթացի, հումքի կամ բաղադրիչների փոփոխության դեպքում:

Տեխնիկական հսկողության սերտիֆիկատն անվավեր կճանաչվի, եթե խաղալիքը այլևս չի համապատասխանում սույն կանոնակարգի 10-րդ կետում և Ձև II-ում սահմանված պահանջներին:

Նշանակված մարմինները չպետք է տրամադրեն արտադրանքի տեխնիկական հսկողության սերտիֆիկատ այն խաղալիքների համար, որոնց տեխնիկական հսկողության սերտիֆիկատները մերժվել են կամ անվավեր են ճանաչվել:

Տեխնիկական փաստաթղթերը և տեխնիկական հսկողության ընթացակարգերին վերաբերող նամակագրությունը պետք է լինի հայերեն լեզվով:

19.Տեխնիկական փաստաթղթերին ներկայացվող պահանջներն են՝

1) Սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեխնիկական փաստաթղթերը պետք է պարունակեն բոլոր անհրաժեշտ տվյալները կամ մանրամասները արտադրողի կողմից կիրառված՝ խաղալիքների սույն կանոնակարգի 10-րդ կետում և Ձև II-ում սահմանված պահանջներին համապատասխանությունը ապահովող միջոցների մասին: Մասնավորապես, պետք է ներառվեն սույն կանոնակարգի Ձև IV- ում նշված փաստաթղթերը:

2) Տեխնիկական փաստաթղթերը պետք է կազմվեն հայերեն լեզվով:

3) Արտադրողը պետք է տեխնիկական փաստաթղթեր տրամադրի Շուկայի վերահսկողության մարմնին՝ ըստ վերջինիս հարցման: Շուկայի վերահսկողության մարմինը արտադրողից պահանջում է 30-օրյա ժամկետում իրեն տրամադրել տեխնիկական փաստաթղթեր, իսկ լուրջ և անմիջական ռիսկի առկայության դեպքում կարող է սահմանվել ավելի կարճ ժամկետ:

4) Եթե արտադրողը չի համապատասխանում սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերի պահանջներին, Շուկայի վերահսկողության մարմինը արտադրողից

կարող է պահանջել, որպեսզի վերջինս սեփական միջոցների հաշվին պատվիրակի նշանակված մարմնին՝ սահմանված ժամանակում փորձարկում իրականացնել ստանդարտներին և անվտանգության հիմնական պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

ԳԼՈՒԽ V. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

20. Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների հետ կապված պահանջները սահմանված են 2012 թվականի մարտի 24-ի «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՕ 19-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի, ինչպես նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

ԳԼՈՒԽ VI. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

21. **Ս**ույն տեխնիկական կանոնակարգին շուկայահանված խաղալիքների համապատասխանության վերահսկողությունը իրականացվում է շուկայի վերահսկողությունն իրականացնող պետական մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքով սահմանված կարգով:

22.Նշանակված մարմինների պարտավորություններն են՝

1) Շուկայի վերահսկողության մարմնի պահանջի դեպքում նշանակված մարմինը պետք է տեղեկատվություն տրամադրի իր կողմից տրված և անվավեր ճանաչված ցանկացած տեխնիկական հսկողության սերտիֆիկատի կամ նմանատիպ սերտիֆիկատի տրամադրման մերժման վերաբերյալ, ներառյալ փորձարկման արձանագրությունները և տեխնիկական փաստաթղթերը:

2) Եթե շուկայի վերահսկողության մարմինը գտնում է, որ խաղալիքը չի համապատասխանում սույն կանոնակարգի 10-րդ կետում և Ձև II-ում նշված

պահանջներին, ապա այն պետք է. ըստ նպատակահարմարության, նշանակված մարմնից պահանջի անվավեր ճանաչել այդ խաղալիքի համար տրված տեխնիկական հսկողության սերտիֆիկատը:

3) Անհրաժեշտության դեպքում, մասնավորապես՝ սույն տեխնիկական կանոնակարգի 18-րդ կետի 4-րդ ենթակետի 2-րդ պարբերության նախատեսված դեպքերում, շուկայի վերահսկողության մարմնի պահանջի դեպքում նշանակված մարմինը պետք է վերանայի տեխնիկական հսկողության սերտիֆիկատը:

23.Ռիսկ ներկայացնող խաղալիքի դեպքում կիրառվում է հետևյալ ընթացակարգը՝

1) Այն դեպքում, երբ շուկայի վերահսկողություն իրականացնող մարմինը «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան գործողություն է իրականացնում կամ երբ առկա է հիմնավորված կասկած, որ այն խաղալիքը, որի վրա տարածվում է սույն տեխնիկական կանոնակարգը, ռիսկ է ներկայացնում մարդկանց առողջությանը կամ անվտանգությանը, ապա նա պետք է տվյալ խաղալիքի գնահատում իրականացնի՝ հաշվի առնելով սույն տեխնիկական կանոնակարգի բոլոր պահանջները:

Եթե գնահատման ընթացքում շուկայի վերահսկողության մարմինը գտնում է, որ խաղալիքը չի համապատասխանում սույն տեխնիկական կանոնակարգում նշված պահանջներին, ապա շուկայի վերահսկողության մարմինը, առանց հապաղման, հանձնարարում է համապատասխան տնտեսվարողին ձեռնարկել անհրաժեշտ ուղղիչ գործողություններ: Տնտեսվարողը, համաձայն շուկայի վերահսկողության մարմնի կողմից տրված հանձնարարականի, պետք է ապահովի խաղալիքի համապատասխանությունը սահմանված պահանջներին և, ռիսկի բնույթին համաչափ, խաղալիքը շրջանառությունից հանի կամ էլ խելամիտ ժամկետներում հետ կանչի:

Շուկայի վերահսկողության մարմինը այդ գործողությունների մասին պետք է տեղեկացնի համապատասխան նշանակված մարմնին:

2) Համապատասխան տնտեսվարողը պետք է գրավոր ձևով երաշխավորի, որ պատշաճ ուղղիչ գործողություն է ձեռնարկվել այն խաղալիքի նկատմամբ, որը շուկայահանվել էր իր կողմից:

3) Եթե համապատասխան տնտեսվարողը անհրաժեշտ ուղղիչ քայլեր չի ձեռնարկում սույն կետի 1-ին ենթակետի երկրորդ պարբերության մեջ նշված ժամկետում, շուկայի վերահսկողության մարմինը համապատասխան նախնական միջոցառումներ պետք է ձեռնարկի խաղալիքը շուկայում հասանելի դարձնելը արգելելու կամ սահմանափակելու կամ շրջանառությունից հանելու կամ հետ կանչելու նպատակով:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը պետք է ներառի բոլոր առկա մանրամասները, մասնավորապես՝ անհրաժեշտ տվյալներ չհամապատախանող խաղալիքի նույնականացման, ծագման, հայտարարված անհամապատախանության բնույթի և առկա ռիսկի, շուկայի վերահսկողության կողմից ձեռնարկված միջոցառումների բնույթի ու տևողության, ինչպես նաև համապատասխան տնտեսվարողի կողմից առաջ քաշված փաստարկների վերաբերյալ: Շուկայի վերահսկողության մարմինը պետք է նշի ստորև բերված անհապատասխանության պատճառներից մեկը՝

ա. խաղալիքի անհամապատասխանությունը մարդկանց առողջությանն ու անվտանգությանը առնչվող պահանջներին, կամ

բ. սույն տեխնիկական կանոնակարգի 12-րդ կետում նշված համապատասխանության կանխավարկածին առնչվող ստանդարտների թերություններ:

24. Անհամապատասխանությունների վերացման գործընթացը հետևյալն է՝

1) Շուկայի վերահսկողության մարմինը պետք է պահանջի համապատասխան տնտեսվարողից վերացնել անհամապատասխանությունը, եթե հանգել է հետևյալ եզրակացություններից մեկին՝

ա. ՀՏԿ մակնշումը կատարված է 14-րդ և 15-րդ կետերի խախտումով

բ. ՀՏԿ մակնշում չի կատարված

գ. համապատասխանության հայտարարագիր կազմված չէ

դ. համապատասխանության հայտարարագիրը ճիշտ չէ կազմվել

ե. տեխնիկական փաստաթղթերն ունեն անճշտություններ կամ լիարժեք չեն

2) Եթե 1-ին ենթակետում նշված անհամապատասխանությունը դեռևս առկա է, ապա շուկայի վերահսկողության մարմինը պետք է իրականացնի համապատասխան միջոցառումներ՝ խաղալիքի շուկայահանումը կանխելու կամ արգելելու կամ հետ կանչելու կամ շրջանառությունից հանելու համար:

ԳԼՈՒԽ VII. ՎԱՐՉԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

25.Սույն տեխնիկական կանոնակարգի համաձայն խաղալիքի շուկայահանումը սահմանափակելու կամ արգելելու, շրջանառությունից հանելու կամ հետ կանչելու նպատակով իրականացվող ցանկացած միջոցառում պետք է հստակ հիմնավորվի:

Համապատասխան շահագրգիռ կողմը պետք է անհապաղ տեղեկացվի վերոնշյալ միջոցառման մասին՝ միևնույն ժամանակ տեղեկացնելով նրան Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն իրեն հասանելի փոխհատուցման և ժամանակային սահմանափակումների մասին:

26. Սույն տեխնիկական կանոնակարգի դրույթները խախտող տնտեսվարողն ենթարկվում է տույժերի և տուգանքների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որը ներառում է քրեական պատասխանատվություն:

ԳԼՈՒԽ VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27. Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 22-ի «Խաղալիքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1551-Ն որոշումը:

Սույն տեխնիկական կանոնարգով սահմանված պահանջները չեն կիրառվում շուկայի վերահսկողության մարմնի կողմից նախքան 2014 թվականի դեկտեմբեր ամիսը և 2004 թվականի նոյեմբերի 22-ի «Խաղալիքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1551-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համաձայն շուկայահանված խաղալիքների վրա:

28. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014 թվականի դեկտեմբերից:

Ձև I

Արտադրանքի ցանկ, որոնք սույն տեխնիկական կանոնակարգի շրջանակներում խաղալիք չեն համարվում

1. Հանդիսությունների և տոնակատարությունների համար դեկորատիվ առարկաները:

2. Կոլեկցիոներների համար նախատեսված արտադրանքներ, պայմանով, որ արտադրանքը կամ դրա փաթեթավորումը ունի տեսանելի և հստակ նշում այն մասին, որ այն նախատեսված է 14 տարեկան և ավելի տարիք ունեցող կոլեկցիոներների համար. Օրինակ.

1) մանրամասն և ճիշտ մասշտաբային մոդելներ

2) ճիշտ մասշտաբային մոդելներ հավաքելու համար նախատեսված հավաքածուներ

3) ազգագրական և դեկորատիվ տիկնիկներ, այլ նմանատիպ առարկաներ

4) խաղալիքների պատմական կրկնօրինակներ

5) իրական հրազենի վերարտադրություն:

3. Սպորտային պարագաները, ներառյալ անվաչմուշկը (զուգահեռ անիվներով), գլաչմուշկը (միագիծ անիվներով), և սքեյթբորդը, որոնք նախատեսված են մինչև 20 կգ մարմնի զանգված ունեցող երեխաների համար:

4. Հեծանիվներ, որոնց հեծնելու առավելագույն բարձրությունը 435 մմ է, որը չափվում է որպես հատակից մինչև նստոցի մակերեսն ընկած հեռավորություն, երբ նստոցը գտնվում է հորիզոնական ամենացածր դիրքում:

5. սկուտերներ և այլ տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված են սպորտում կամ հանրային տրանսպորտային ուղիներում կամ արահետներում օգտագործելու համար:

6. էլեկտրաշարժիչով մեքենաներ, որոնք նախատեսված են հանրային տրանսպորտային ուղիներում կամ արահետներում կամ դրանց կից մայթերի վրա օգտագործելու համար:

7. Խորը ջրում օգտագործելու համար նախատեսված ջրային սարքավորում և երեխաներին լողալ սովորեցնելու համար նախատեսված միջոցներ, ինչպիսին են լողանստոցը և փրկօղակը:

8. Ավելի քան 500 կտորներից բաղկացած գլուխկոտրուկները:

9. Սեղմած գազով աշխատող ատրճանակներ և հրացաններ, բացառությամբ ջրային ատրճանակների և հրացանների, նաև ավելի քան 120 սմ երկարությամբ նետաձգության աղեղները:

10. Հրավառելիք, ներառյալ հարվածային կապսուլները, որոնք հատուկ չեն նախագծվել խաղալիքների համար:

11. Սրածայր հրթիռներով արտադրանքներ և խաղեր, օրինակ՝ մետաղական գլխիկով դարթսի հավաքածու:

12. Ուսուցման համար նախատեսված ֆունկցիոնալ արտադրանք, ինչպիսիք են էլեկտրական ջեռոցները, արդուկները կամ նմանատիպ այլ արտադրանքը, որոնք ունեն 24 վոլտից ավելի անվանական լարում և վաճառվում են բացառապես մեծահասակի հսկողությամբ ուսուցողական նպատակով օգտագործելու համար:

13. Ավագ հրահանգչի հսկողությամբ դպրոցներում և այլ կրթական հաստատություններում ուսուցման նպատակով նախատեսված արտադրանք, օրինակ՝ գիտական սարքավորում:

14. Էլեկտրական սարքավորումներ, ինչպիսիք են համակարգիչները և խաղային վահանակները, որոնք օգտագործվում են ինտերակտիվ ծրագրերի և դրանց հետ կապված սարքավորումների համար, բացառությամբ այն էլեկտրական սարքավորումների, որոնք հատուկ նախագծված են երեխաների համար, ինչպիսիք են հատուկ նախագծված անհատական համակարգիչները, ստեղնաշարերը, ձեռքով ղեկավարելու սարքը (joystick), ղեկը:

15. Հանգստի և զվարճանքի համար նախատեսված ծրագրային միջոցները, ինչպիսիք են համակարգչային խաղերը, և դրանց կրիչները, օրինակ՝ խտասկավառակները:

16. Մանկական ծծակները:

17. Մանկական շարժական լուսատուները:

18. Խաղալիքների էլեկտրական տրանսֆորմատորները:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ

I.Ֆիզիկական և մեխանիկական հատկությունները

1. Խաղալիքները և դրանց մասերը, իսկ ֆիքսված խաղալիքների դեպքում՝ դրանց հենարանները պետք է ունենան անհրաժեշտ ամրություն և նպատակահարմարության դեպքում նաև կայունություն, որպեսզի առանց կոտրվելու կամ ձևախեղման ենթարկվելու դիմանան ծանրաբեռնվածությանը, որին դրանք ենթարկվում են օգտագործման ընթացքում՝ առաջացնելով ֆիզիկական վնաս պատճառելու ռիսկ:

2. Խաղալիքների հասանելի եզրերը, ելուստները, քուղերը, մալուխները և ամրակցիչները պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ դրանց հետ շփումից ֆիզիկական վնասվածքների առաջացման ռիսկը հնարավորինս նվազեցվի:

3. Խաղալիքները պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ դրանց մասերի շարժումը որևէ ռիսկ չներկայացնի կամ ներկայացնի միայն դրանց օգտագործմանը բնորոշ նվազագույն ռիսկ:

4. Խաղալիքները և դրանց մասերը չպետք է ներկայացնեն խեղդվելու ռիսկ:

1) Խաղալիքները և դրանց մասերը չպետք է ներկայացնեն շնչահեղձության ռիսկ, որն առաջանում է բերանի և քթի օդի հոսքի արտաքին խոչընդոտով փակման արդյունքում:

2) Խաղալիքները և դրանց մասերը պետք է ունենան այնպիսի չափեր, որոնք բերանի կամ ըմպանի մեջ խրված կամ ստորին շնչուղիների մուտքի մոտ առարկաների հայտնվելու արդյունքում օդի հոսքի օբստրուկցիայի առաջացման հետևանքով շնչահեղձության ռիսկ չներկայացնեն:

3) Այն խաղալիքները, որոնք հստակորեն նախատեսված են 36 ամսականից ցածր երեխաների կողմից օգտագործման համար, ինչպես նաև դրանց բաղադրիչ մասերը և ցանկացած առանձնացվող մաս, պետք է ունենան այնպիսի չափեր, որ կանխվի դրանց կուլ տալը կամ ներշնչելը: Դա նաև վերաբերում է այլ խաղալիքներին, դրանց բաղադրիչ մասերին և ցանկացած առանձնացվող մասի, որոնք նախատեսված են բերանը դնելու համար:

4) Մանրածախ վաճառքի համար նախատեսված խաղալիքների փաթեթավորումը չպետք է ներկայացնի շնչահեղձության ռիսկ, որը առաջանում է արտաքին խոչընդոտի պատճառով բերանի և քթի օդի հոսքի օբստրուկցիայի հետևանքով:

5) Խաղալիքները, որոնք տեղադրվում են սննդի մեջ կամ միախառնված են սննդի հետ, պետք է իրենց փաթեթավորումն ունենան: Մատակարարման պահին փաթեթավորումը պետք է ունենա այնպիսի չափեր, որ կանխվի դրանց կուլ տալը և/կամ ներս շնչելը:

6) «4)» ու «5)» կետերում նշված խաղալիքի փաթեթավորումը, որը գնդաձև, ձվաձև կամ էլիպսաձև է, և դրա ցանկացած առանձնացվող մասերի կամ գլանաձև խաղալիքի կլորացված եզրերով փաթեթավորումը պետք է ունենան այնպիսի չափեր,

որպեսզի կանխվի բերանի կամ ըմպանի մեջ խրված կամ ստորին շնչուղիների մուտքի մոտ փաթեթավորման հայտնվելու արդյունքում օդի հոսքի օբստրուկցիան:

7) Արգելվում է օգտագործման պահին սննդամթերքին ամուր կցված այն խաղալիքների շուկայահանումը, որոնք ուղղակի հասանելի են դառնում սննդի ընդունման արդյունքում: Խաղալիքների այն մասերը, որոնք այլ կերպ ուղղակիորեն կցված են սննդամթերքին, պետք է համապատասխանեն «3)» և «4)» կետերով սահմանված պահանջներին:

5. Ջրային խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ հնարավորինս նվազեցվի խաղալիքի լողունակության ու երեխային պահելու հնարավորության կորստի ռիսկը՝ հաշվի առնելով խաղալիքի օգտագործման ցուցումները:

6. Այն խաղալիքները, որոնց մեջ հնարավոր է մտնել և որոնք փակ տարածք են հանդիսանում դրանք զբաղեցնողների համար, պետք է ունենան հնարավոր օգտագործողի կողմից ներսից հեշտությամբ բացվող ելքի միջոցներ:

7. Օգտագործողներին շարժունակություն ընձեռող խաղալիքները պետք է հնարավորության սահմաններում ներառեն արգելակման համակարգ, որը պետք է հարմարեցված լինի խաղալիքի տեսակին և համազոր լինի դրանից անջատված կինետիկ էներգիային: Այս համակարգը պետք է հեշտությամբ գործի գցվի օգտագործողի կողմից առանց օգտագործողի դուրս նետվելու կամ օգտագործողի կամ երրորդ կողմի ֆիզիկական վնասվածք ստանալու ռիսկի:

Վարելու համար նախատեսված էլեկտրական խաղալիքների նախագծային առավելագույն արագությունը պետք է սահմանափակվի այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի վնասվածքի ռիսկը:

8. Գնդակների ձևն ու կազմությունը և կինետիկ էներգիան, որը կարող է անջատվել կրակելու նպատակով նախագծված խաղալիքից կրակելու ժամանակ, պետք է օգտագործողի կամ երրորդ անձի համար չներկայացնի ֆիզիկական վնասվածքի ռիսկ՝ հաշվի առնի խաղալիքի բնույթը:

9. Խաղալիքը պետք է արտադրվի այնպես, որպեսզի երաշխավորվի հետևյալը՝

1) ցանկացած հասանելի մակերեսներին դիպչելիս առավելագույն և նվազագույն ջերմաստիճանը վնասվածք չի պատճառի

2) խաղալիքում պարունակվող հեղուկներն ու գազերը չպետք է հասնեն այնպիսի ջերմաստիճանների կամ ճնշումների, որոնք խաղալիքի պատշաճ աշխատելու հիմնական պատճառներից բացի այլ պատճառներով խաղալիքից անջատվելու դեպքում այրվածք կամ այլ ֆիզիկական վնասվածք պատճառեն:

10. Ձայն արձակելու համար նախագծված խաղալիքները պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ իմպուլսային աղմուկի ու շարունակական աղմուկի առավելագույն արժեքները չվնասեն երեխաների լսողությունը:

11. Ակտիվ հանգստի խաղալիքները պետք է արտադրվեն այնպես, որ նվազեցվի մարմնի մասերի ճզմվելու կամ կոտրվածք առաջացնելու կամ հագուստի կառչելու և ընկնելու, հարվածի և ջրում խեղդվելու ռիսկը: Մեկ կամ մի քանի երեխաների խաղալու համար հասանելի այսպիսի խաղալիքի ցանկացած մակերես պետք է նախագծված լինի նրանց՝ իր վրա կրելու համար:

II.Դյուրավառություն

1. Երեխայի շրջակայքում առկա խաղալիքները չպետք է վտանգավոր բոցավառվող տարր հանդիսանան: Ուստի դրանք պետք է կազմված լինեն այնպիսի նյութերից, որոնք համապատասխանում են հետևյալ մեկ կամ մի քանի պայմաններին՝

1) դրանք ուղղակիորեն բոցի կամ կայծի կամ կրակի այլ պոտենցյալ աղբյուրի ազդեցությանը ենթարկվելիս չեն այրվում

2) դրանք հեշտությամբ չեն բոցավառվում (բոցը մարում է կրակի պատճառի վերանալիս)

3) բոցավառվելու դեպքում դրանք այրվում են դանդաղ և ունեն բոցի տարածման ցածր արագություն

4) անկախ խաղալիքի քիմիական կազմից՝ դրանք են նախագծված այնպես, որպեսզի մեխանիկորեն դանդաղեցնեն այրման գործընթացը:

Այսպիսի դյուրավառ նյութերը չպետք է բոցավառման ռիսկ ներկայացնեն խաղալիքներում օգտագործված այլ նյութերի համար:

2. Խաղալիքները, որոնք իրենց բնույթից ելնելով պարունակում են Բ Ձևի Ա մասում նշված դասակարգման չափանիշներին բավարարող քիմիական փորձարկումների նյութեր և սարքավորումներ, մոդելների հավաքման, պլաստիկ կամ կերամիկական ծեփագործության, էմալապատման, լուսանկարչական կամ նմանատիպ գործողությունների համար նախատեսված նյութեր կամ խառնուրդներ, կարող են պարունակել ոչ դյուրավառ ցնդող բաղադրիչների կորստի պատճառով դյուրավառ դարձող նյութեր կամ խառնուրդներ:

3. Հարվածային կապսուլից տարբեր խաղալիքները չպետք է պայթյունավտանգ լինեն կամ պարունակեն տարրեր կամ նյութեր, որոնք կարող են պայթել սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետի 2 ենթակետի առաջին պարբերությունում նշված եղանակով օգտագործվելու դեպքում:

4. Խաղալիքները, մասնավորապես քիմիական խաղերը և խաղալիքները, չպետք է պարունակեն նյութեր կամ խառնուրդներ՝

1) որոնք միախառնվելու դեպքում կարող են պայթել քիմիական ռեակցիայի կամ տաքացնելու արդյունքում

2) որոնք կարող են պայթել, երբ խառնվում են օքսիդացող նյութերի հետ, կամ

3) որոնք պարունակում են ցնդող բաղադրիչներ, որոնք դյուրավառ են օդում կամ կարող են առաջացնել դյուրավառ կամ պայթուցիկ գոլորշու/օդի խառնուրդ:

III.Քիմիական հատկությունները

1. Խաղալիքները պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ մարդու առողջության համար բացասական ազդեցության ռիսկեր չառաջացնեն այն քիմիական նյութերի կամ խառնուրդների պատճառով, որոնցից բաղկացած են խաղալիքները կամ որոնք պարունակվում են դրանցում սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետի 2 ենթակետի առաջին պարբերությունում նշված եղանակով օգտագործվելու դեպքում:

Խաղալիքները պետք է համապատասխանեն արտադրանքի որոշ կատեգորիաների կամ որոշ նյութերի և խառնուրդների սահմանափակումներին վերաբերող Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությանը:

2. Երեխաների առողջության պաշտպանության նպատակով խաղալիքների օգտագործման արդյունքում փոխանցվող կենսամատչելիությունը չպետք է գերազանցի հետևյալ նյութերի օրական սահմանաչափերը՝

Ծարիր՝ 0,2 միկրոգրամ,
Մկնդեղ՝0,1 միկրոգրամ
Բարիում՝ 25,0 միկրոգրամ,
Կադմիում՝ 0,6 միկրոգրամ,
Քրոմ՝0,3 միկրոգրամ,
Կապար՝ 0,7 միկրոգրամ,
Սնդիկ՝ 0,5 միկրոգրամ,
Սելեն՝5,0 միկրոգրամ,

կամ այնպիսի այլ արժեքներ, որոնք սահմանված են այս կամ այլ նյութերին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ հիմնվելով գիտական ապացույցի վրա:

Այս նյութերի կենսամատչելիությունը նշանակում է թունավոր ազդեցություն ունեցող լուծվող էքստրակտ:

3. Խաղալիքը չպետք է պարունակի վտանգավոր նյութերի կամ խառնուրդների այնպիսի քանակներ, որոնք կարող են վտանգել այն օգտագործող երեխաների առողջությունը: Բոլոր դեպքերում խստորեն արգելվում է ցանկացած խաղալիքում օգտագործել վտանգավոր նյութեր կամ խառնուրդներ, եթե նախատեսվում է, որ խաղալիքի օգտագործման դեպքում այդ վտանգավոր նյութերը կամ խառնուրդները օգտագործվելու են ինքնին:

Այն դեպքերում, երբ սահմանափակ քանակությամբ վտանգավոր նյութերի կամ խառնուրդների օգտագործումն էական է կոնկրետ խաղալիքների աշխատանքի, մասնավորապես՝ քիմիական փորձարկումների համար օգտագործվող նյութերի կամ սարքավորումների, մոդելների հավաքման, պլաստիկ կամ կերամիկական ծեփագործության, էմալապատման, լուսանկարչական կամ նմանատիպ գործողությունների համար, ապա դրանց խտության թույլատրելի առավելագույն մակարդակը յուրաքանչյուր վտանգավոր նյութի կամ խառնուրդի համար պետք է սահմանված լինի Հայաստանի ազգային ստանդարտով:

4. Նիտրոզամինները և նիտրոզացվող նյութերը պետք է արգելվեն 36 ամսականից ցածր երեխաների օգտագործման համար նախատեսված խաղալիքներում

օգտագործվելու կամ այլ այնպիսի խաղալիքներում օգտագործվելու համար, որոնք նախատեսված են բերանում դնելու համար, եթե նյութերի միգրացիան հավասար է կամ բարձր է 0,05 մգ/կգ-ից՝ նիտրոզամինների համար և 1 մգ/կգ՝ նիտրոզացվող նյութերի համար:

5. Խաղալիքները չպետք է պարունակեն հետևյալ ալերգեն հոտավետ նյութերը.

Աղյուսակ 1

Հ/հ	Ալերգեն հոտավետ նյութերի անվանումը	Քիմիկատների մասին տեղեկատվական ծառայության (CAS) համար
1.	Կղմուխ Հեղինեի	97676-35-2
2.	Ալիլիսոցիանատ	57-06-7
3.	Բենզիլ ցիանիդ	140-29-4
4.	4 տերտ-Բութիլֆենոլ	98-54-4
5.	Թելուկ շահսիպեխի յուղ	8006-99-3
6.	Ցիկլամեն ալկոհոլ	4756-19-8
7.	Դիէթիլ մալեատ	141-05-9
8.	Դիհիդրոկումարին	119-84-6
9.	2,4-Դիհիդրոքսի-3-մեթիլբենզալդեհիդ	6248-20-0
10.	3,7-դիմեթիլ-2-օկտեն-1-օլ (6,7 դիհիդրոգերանիոլ)	40607-48-5
11.	4,6-դիմեթիլ-8-տերտ-բութիլկումարին	17874-34-9
12.	Դիմեթիլ ցիտրացոնատ	617-54-9
13.	7,11-Դիմեթիլ-4.6,10-դոդեկատրին-3- մեկ	26651-96-7
14.	6,10-Դիմեթիլ-3.5,9-անդեկատրին-2-մեկ	141-10-6
15.	Դիֆենիլամին	122-39-4
16.	Էթիլ ակրիլատ	140-88-5
17.	Թզի տերև, թարմ և պատրաստուկներ	68916-52-9
18.	տրանս-2-Հեպտենալ	18829-55-5
19.	տրանս-2-հեքսենալ դիէթիլ ացետալ	67746-30-9
20.	Տրանս-2-հեքսենալ դիմեթիլ ացետալ	18318-83-7
21.	Հիդորաբիտիլ ալկոհոլ	13393-93-6
22.	4-էֆոքսի-ֆենոլ	622-62-8
23.	6-իզոպրոպիլ-2-դեկահիդրոնավթալենոլ	34131-99-2
24.	7-մետոքսիկումարին	531-59-9
25.	4-մետոքսիֆենոլ	150-76-5
26.	4-(պ-մետոքսիֆենոլ)-3-բութեն-2- մեկ	943-88-4
27.	1-(պ-մետոքսիֆենոլ)-1-պենտեն-3- մեկ	104-27-8
28.	Մեթիլ տրանս-2-բութենոատ	623-43-8
29.	6-մեթիլկումարին	92-48-8

30.	7-մեթիլկումարին	2445-83-2
31.	5-մեթիլ-2,3-հեքսանեդիոն	13706-86-0
32.	Պանչակարմայի արմատի յուղ?	8023-88-9
33.	7-էթոքսի-4-մեթիլկումարին	87-05-8
34.	Հեքսահիդրոկումարին	700-82-3
35.	Պերու բալզամ, հում	8007-00-9
36.	2-պենտիլիդեն-ցիկլոհեքսանոն	25677-40-1
37.	3.6,10-տրիմեթիլ-3.5,9-անդեկատրիեն-2-մեկ	1117-41-5
38.	Վերբենայի յուղ	8024-12-2
39.	Մուշկ ամբրետե (4-տերտ-բութիլ-3-մեթօքսի-2,6-դինիտրոտոլուեն)	83-66-9
40.	4-ֆենիլ-3-բութեն-2- մեկ	122-57-6
41.	Ամիլ ցինամալ	122-40-7
42.	Ամիլցինամիլ ալկոհոլ	101-85-9
43.	Բենզիլ ալկոհոլ	100-51-6
44.	Բենզիլ սալիցիլատ	118-58-1
45.	Ցինամիլ ալկոհոլ	104-54-1
46.	Ցինամալ	104-55-2
47.	Ցիտրալ	5392-40-5
48.	Կումարին	91-64-5
49.	Յուգենոլ	97-53-0
50.	Գերանիոլ	106-24-1
51.	Հիդրոքսի-ցիտրոնելալ	107-75-5
52.	Հիդրոքսի-մեթիլպենտիլցիկլոհեքսենեկարբոքսալդեհիդ	31906-04-4
53.	Իսոեուգենոլ	97-54-1
54.	Կաղնու մամուռի էքստրակտներ	90028-68-5
55.	Ծառի մամուռի էքստրակտներ	90028-67-4

Սակայն այդ հոտավետ նյութերի չնչին քանակության առկայությունը կարող է թույլատրվել, եթե դա տեխնիկապես անխուսափելի է պատշաճ արտադրական գործելակերպի կիրառման դեպքում և չի գերազանցում 100 մգ/կգ:

Բացի այդ, հետևյալ ալերգեն հոտավետ նյութերի անունները պետք է նշվեն խաղալիքի, ամրակցված պիտակի, փաթեթավորման կամ ուղեկցող թերթիկի վրա, եթե այդպիսիք առկա են 100մգ/կգ համակցությունը գերազանցող խաղալիքներում ու նրա բաղադրիչներում.

Աղյուսակ 2

Հ/հ	Ալերգեն հոտավետ նյութերի անվանումը	Քիմիկատների մասին տեղեկատվական ծառայության CAS համար
1.	Անիսիլ ալկոհոլ	105-13-5
2.	Բենզիլ բենզոատ	120-51-4
3.	Բենզիլ ցինամատ	103-41-3
4.	Ցիտրոնելոլ	106-22-9
5.	Ֆարնեզոլ	4602-84-0
6.	Հեքսիլ ցինամելդեհիդ	101-86-0
7.	Լիլիալ	80-54-6
8.	d-լիմոնեն	5989-27-5
9.	Լինալուլ	78-70-6
10.	Մեթիլ հեպտին կարբոնատ	111-12-6
11.	3-մեթիլ-4-(2.6,6-տրիմեթիլ-2-ցիկլոհեքսեն-1-yl)-3-բութեն-2-մեկ	127-51-5

6. 5-րդ կետի Աղյուսակ 1-ի 41-55-րդ կետերում և այդ կետի Աղյուսակ 2-ի 1-11-րդ կետերում նշված հոտավետ նյութերի օգտագործումը կարող է թույլատրվել հոտառական խաղատախտակի խաղերում, կոսմետիկ հավաքածուներում և համային խաղերում, եթե.

1)այդ հոտավետ նյութերը հստակ պիտակավորված են փաթեթավորման վրա և փաթեթավորումը կրում է V-րդ Ձևի Բ մասի 10-րդ կետում սահմանված զգուշացումը

2) այդ հոտավետ նյութերը համապատասխանում են սննդի անվտանգության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը (եթե կիրառելի է):

Նման հոտառական խաղատախտակները, կոսմետիկ պարագաները և համային խաղերը չեն կարող օգտագործվել մինչև 36 ամսական երեխաների կողմից և պետք է համապատասխանեն V-րդ Ձևի Բ մասի 1-ին կետին:

7. Խաղալիքներից կամ խաղալիքների բաղադրիչներից նյութերի փոխանցման չափը չպետք է գերազանցի հետևյալ արժեքները.

Աղյուսակ 3

Տարր	Մգ/կգ խաղալիքի չոր, փխրուն, փոշենման կամ ճկուն նյութի մեջ	Մգ/կգ խաղալիքի հեղուկ կամ կպչուն նյութի մեջ	Մգ/կգ խաղալիքի նյութի քերուկում
Ալյումին	5625	1406	70000
Ծարիր (սուրմա)	45	11,3	560
Մկնդեղ	3,8	0,9	47
Բարիում	4500	1125	56000
Բոր	1200	300	15000
Կադմիում	1,9	0,5	23
Քրոմ (III)	37,5	9,4	460
Քրոմ (IV)	0,02	0,005	0,2
Կոբալտ	10,5	2,6	130
Պղինձ	622,5	156	7700
Կապար	13,5	3,4	160
Մագնեզիում	1200	300	15000
Սնդիկ	7,5	1,9	94
Նիկել	75	18,8	930
Սելեն	37,5	9,4	460
Ստրոնտիում	4500	1125	56000
Անագ	15000	3750	180000
Օրգանական անագ	0,9	0,2	12
Ցինկ	3750	938	460000

Այս սահմանային արժեքները չեն կարող ավելացվել այն խաղալիքներին կամ խաղալիքների բաղադրիչներին, որոնք իրենց հասանելիության, գործառույթի, ծավալի կամ զանգվածի բերումով հստակորեն բացառում են ծծելու, լիզելու, կուլ տալու կամ մաշկի հետ երկարատև շփման հետ կապված ցանկացած վտանգ այն դեպքում, երբ դրանք օգտագործվում են սույն տեխնիկական կանոնակարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետի առաջին պարբերությունում նշված ձևով:

IV. Էլեկտրական հատկություններ

1. Խաղալիքները չպետք է սնուցվեն 24 վոլտ անվանական լարումը գերազանցող էլեկտրական հաստատուն հոսանքով կամ հավասարազոր փոփոխական հոսանքով, իսկ դրանց հասանելի մասերը չպետք է գերազանցեն 24 վոլտ հաստատուն կամ հավասարազոր փոփոխական լարումը:

Ներքին լարումները չպետք է գերազանցեն 24 վոլտ հաստատուն կամ հավասարազոր փոփոխական լարումը, եթե չի երաշխավորվում, որ լարումը և առաջացած հոսանքի համակցությունը չեն հանգեցնի որևէ ռիսկի կամ վնասակար էլեկտրահարման նույնիսկ այն դեպքում, երբ խաղալիքը փչացել է:

2. Էլեկտրահարում առաջացնելու ունակ էլեկտրականության աղբյուրին միացած կամ միացման ենթակա խաղալիքների այն մասերը, մալուխները կամ այլ հաղորդիչները, որոնց միջոցով էլեկտրականությունը փոխանցվում է այդ մասերին, պետք է պատշաճ կերպով մեկուսացվեն և մեխանիկորեն պաշտպանված լինեն, որպեսզի կանխեն էլեկտրահարման ռիսկը:

3. Էլեկտրական խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ երաշխավորվի այն պայմանը, ըստ որի ուղղակիորեն հասանելի բոլոր մակերեսների հնարավոր առավելագույն ջերմաստիճանի դեպքում դրանց դիպչելիս այրվածքներ չառաջանան:

4. Կանխատեսելի թերության պայմաններում խաղալիքները պետք է պաշտպանված լինեն էլեկտրական սնուցման աղբյուրից բխող էլեկտրական վտանգներից:

5. Էլեկտրական խաղալիքները պետք է պատշաճ կերպով պաշտպանված լինեն հրդեհի առաջացման վտանգներից:

6. Էլեկտրական խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ էլեկտրական, մագնիսական և էլեկտրամագնիսական դաշտերը և սարքավորումներից առաջացող այլ ճառագայթումները սահմանափակվեն խաղալիքի գործունեության համար անհրաժեշտ աստիճանով և պետք է գործեն համընդհանուր ընդունված ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխան անվտանգության մակարդակի վրա՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից սահմանված հատուկ չափաքանակները:

7. Էլեկտրոնային կառավարման համակարգ ունեցող խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ խաղալիքն անվտանգ գործի նույնիսկ այն դեպքում, երբ էլեկտրական համակարգը սկսում է վատ աշխատել կամ փչանում է՝ այդ համակարգի խափանման կամ արտաքին գործոնի պատճառով:

8. Խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որպեսզի որևէ վտանգ չներկայացնեն առողջությանը կամ լազերներից, լուսարձակող դիոդներից կամ ցանկացած այլ տեսակի ճառագայթումից աչքերի կամ մաշկի վնասվածքի ռիսկ չառաջացնեն:

9. Խաղալիքի էլեկտրական փոխարկիչը չպետք է խաղալիքի անբաժանելի մասը լինի:

V.Հիգիենա

1. Խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ համապատասխանեն հիգիենայի ու մաքրության պահանջներին՝ ինֆեկցիայի, հիվանդանալու կամ վարակվելու ցանկացած ռիսկից խուսափելու նպատակով:

2. Մինչև 36 ամսական երեխաների կողմից օգտագործման համար նախատեսված խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ հնարավոր լինի դրանք մաքրել: Ելնելով այս պայմանից՝ տեքստիլ խաղալիքը պետք է լինի լվացվող, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է մեխանիզմ, որը կարող է վնասվել թրջվելու դեպքում: Խաղալիքը պետք է այս կետի և արտադրողի ցուցումներին համապատասխան լվացվելուց հետո ևս համապատասխանի անվտանգության պահանջներին:

VI.Ռադիոակտիվություն.

Խաղալիքները պետք է համապատասխանեն միջուկային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:

Ձև III

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

1. Հ/h (խաղալիքի եզակի նույնականացում):

2. Արտադրողի կամ նրա լիազոր ներկայացուցչի անունը և հասցեն:

3. Համապատասխանության հայտարարագիրը, որը ներկայացվում է բացառապես արտադրողի պատասխանատվության ներքո:

4. Հայտարարագրի առարկան (խաղալիքի նույնականացումը, որը տալիս է հետևելության հնարավորություն): Այն պետք է ներառի բավարար հստակություն ունեցող գունավոր պատկեր, ինչը հնարավոր է դարձնում խաղալիքի նույնականացումը:

5. 4-րդ կետում նկարագրված հայտարարագրի առարկան համապատասխանում է Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրությանը:

6. Հղումներ այն օգտագործված համապատասխան ստանդարտներին կամ տեխնիկական մասնագրերին, որոնցով համապատասխանությունը հայտարարագրվում է:

7. Որտեղ կիրառելի է նշանակված մարմինը … (անուն, համար)… կատարել է (միջամտության նկարագրություն)… և տրամադրել է սերտիֆիկատ:

8. Հավելյալ տեղեկություններ:

Ստորագրություն……
(վայրը և ամսաթիվը)……
(անուն, պաշտոն)……

«_____» _____ №_____

_____
(наименование изготовителя, адрес, телефон, факс)

в лице _____
(должность, имя, фамилия руководителя)

декларирует под собственную ответственность, что продукция _____

_____

(наименование, тип, марка, код продукции, информация о серийном

_____

производстве или на один лот продукции)

_____

(номер и объем лота, заводской номер, наименование и номер сопроводительного документа/ накладной,

_____

контракта, сертификата качества, наименование изготовителя, страны и т. д.)

к которой относится эта декларация, не подвергает опасности жизнь и здоровье потребителей, не оказывает отрицательное воздействие на окружающую среду и соответствует следующим техническим регламентам или стандартам:

_____

(обозначение технических регламентов или стандартов с указанием пунктов этих нормативных

_____

документов, которые устанавливают требования для соответствующей продукции)

Декларация составлена на основании _____

(информация о документах, на основе которых была составлена декларация о соответствии)

Дополнительная информация _____

Руководитель организации _____ _____

(Подпись) *(имя, фамилия)*

М. П.

Ձև IV

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Սույն տեխնիկական կանոնակարգի 19-րդ կետում նշված գնահատմանը առնչվող տեխնիկական փաստաթղթերը պետք է պարունակեն՝

1) նախագծման և արտադրության մանրամասն նկարագրություն, ներառյալ խաղալիքի մեջ օգտագործված բաղադրիչների և նյութերի ցանկը, ինչպես նաև քիմիական նյութերի մատակարարներից կողմից տրամադրված օգտագործված քիմիական նյութերի վերաբերյալ անվտանգության տեղեկանքներ

2) սույն տեխնիկական կանոնակարգի 16-րդ կետի համաձայն իրականացված անվտանգության գնահատումներ

3) կիրառված համապատասխանության գնահատման ընթացակարգի նկարագրություն

4) համապատասխանության հայտարարագրի պատճեն

5) արտադրման և պահեստավորման վայրերի հասցեներ

6) փաստաթղթերի պատճեններ, որոնք արտադրողը ներկայացրել է նշանակված մարմնին՝ դրա ներգրավվածության դեպքում

7) փորձարկման արձանագրություններ և միջոցների նկարագրություն, որոնցով արտադրողը ապահովել է արտադրանքի համապատասխանությունը ստանդարտներին, եթե արտադրողը կիրառել է սույն տեխնիկական կանոնակարգի 17-րդ կետի 2-րդ ենթակետում նշված արտադրության ներքին վերահսկողության ընթացակարգը

8) արտադրանքի տեխնիկական հսկողության փորձաքննության սերտիֆիկատի պատճենը, միջոցների նկարագրությունը, որոնցով արտադրողն ապահովել է արտադրության համապատասխանությունը արտադրանքի տեխնիկական հսկողության փորձաքննության սերտիֆիկատում նկարագրված արտադրանքի տեսակին և նշանակված մարմնին ներկայացված փաստաթղթերի պատճենները, եթե արտադրողը խաղալիքը ներկայացրել է արտադրանքի տեխնիկական հսկողության փորձաքննությանը և հետևել է սույն տեխնիկական կանոնակարգի 17-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեսակի համապատասխանության ընթացակարգին:

Ձև V

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

Մաս Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

Սույն տեխնիկական կանոնակարգի 11-րդ կետի 1-րդ ենթակետում նշված օգտագործողի համար սահմանափակումները պետք է ներառեն առնվազն օգտագործողի նվազագույն և առավելագույն տարիքը և, նպատակահարմարության դեպքում, օգտագործողի կարողությունները, առավելագույն և նվազագույն քաշը և խաղալիքը միայն չափահասների վերահսկողության ներքո օգտագործելու անհրաժեշտությունը:

Մաս Բ

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Խաղալիքներ, որոնք նախատեսված չեն մինչև 36 ամսական երեխաների կողմից օգտագործման համար

Այն խաղալիքները, որոնք կարող են վտանգավոր լինել մինչև 36 ամսական երեխաների համար, պետք է ունենան զգուշացում, ինչպես օրինակ՝ “Նախատեսված չէ մինչև 36 ամսական երեխաների համար” կամ “Նախատեսված չէ մինչև 3 տարեկան երեխաների համար” կամ զգուշացում հետևյալ պատկերի տեսքով՝

Այս զգուշացումները պետք է ուղեկցվեն որոշակի վտանգի դեպքում նախատեսված նախազգուշացման հակիրճ նշումով, որը կարող է լինել օգտագործման հրահանգներում:

Այս կետը չի տարածվում այն խաղալիքների վրա, որոնք ըստ իրենց գործառույթի, չափերի, բնութագրերի կամ հատկությունների կամ այլ համոզիչ պատճառներով ակնհայտ նախատեսված չեն մինչև 36 ամսական երեխաների համար:

2. Գործող խաղալիքներ

Գործող խաղալիքները պետք է ունենան հետևյալ զգուշացումը՝

«Միայն տնային օգտագործման համար»:

Խաչկապով միացված գործող խաղալիքները, ինչպես նաև այլ գործող խաղալիքները անհրաժեշտության դեպքում պետք է ուղեկցվեն հրահանգներով, որոնք ուշադրություն են հրավիրում ժամանակ առ ժամանակ հիմնական մասերի (կախված մասերի, ամրացումների, հենարանների և այլն) ստուգման ու պահպանման անհրաժեշտության վրա, և նշեն, որ եթե այդ ստուգումներն չեն արվում, խաղալիքը կարող է ընկնելու կամ գլխիվայր շրջվելու պատճառ դառնալ:

Հրահանգներ պետք է տրվեն նաև խաղալիքների ճիշտ հավաքման մասին՝ նշելով այն մասերը, որոնք կարող են վտանգ ներկայացնել սխալ հավաքվելու դեպքում: Պետք է տրվի խաղալիքը համապատասխան մակերեսի վրա դնելու վերաբերյալ հատուկ տեղեկատվություն:

3. Ֆունկցիոնալ խաղալիքներ

Ֆունկցիոնալ խաղալիքները պետք է ունենան հետևյալ գուշացումը՝

«Օգտագործել չափահասների անմիջական հսկողության ներքո»:

Բացի այդ, այս խաղալիքները պետք է ուղեկցվեն ուղղություն տվող աշխատանքային հրահանգներով, ինչպես նաև օգտագործողի կողմից ձեռնարկվող նախազգուշական գործողությունների նշումով՝ զգուշացնելով, որ այդ նախազգուշացումները չկատարելու դեպքում օգտագործողը դառնում է խոցելի այն վտանգների համար, որոնք սովորաբար կապված են այն սարքի կամ արտադրանքի հետ, որի մասշտաբային մոդելն է կամ դրա նմանակումն է տվյալ խաղալիքը: Պետք է նաև նշվի, որ խաղալիքը պետք է պահել արտադրողի կողմից սահմանած որոշակի տարիքից փոքր երեխաների համար անհասանելի վայրում:

4. Քիմիական խաղալիքներ

Որոշ նյութերի կամ խառնուրդների դասակարգման, փաթեթավորման ու պիտակավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրության մեջ նշված դրույթների կիրառմանը չհակասելով՝ ինքնին վտանգավոր նյութեր և խառնուրդներ պարունակող խաղալիքների օգտագործման հրահանգները պետք է ունենան զգուշացում այդ նյութերի կամ խառնուրդների վտանգավոր բնույթի մասին և օգտագործողի կողմից նախազգուշական միջոցներ ձեռնարկելու ցուցում՝ դրանց հետ կապված վտանգներից խուսափելու համար, որոնք պետք է ըստ խաղալիքի տեսակի համառոտակի նշվեն: Այս տեսակի խաղալիքների օգտագործումից առաջացած լուրջ պատահարների դեպքում պետք է նշվի նաև առաջին օգնության ցուցաբերման գործողությունները: Պետք է նաև նշվի, որ խաղալիքը պետք է պահել արտադրողի կողմից սահմանած որոշակի տարիքից փոքր երեխաների համար անհասանելի վայրում:

Ի լրումն սույն կետի առաջին պարբերությունում նշված հրահանգների՝ քիմիական խաղալիքների փաթեթի վրա պետք է լինի հետևյալ զգուշացումը.

“Նախատեսված չէ (տարիքը պետք է սահմանվի արտադրողի կողմից) տարեկանից փոքր երեխաների համար: Օգտագործել չափահասների հսկողության ներքո:”

Քիմիական խաղալիքներ են համարվում, մասնավորապես՝ քիմիական հավաքածուներ, փորձանմուշ պահելու համար նախատեսված պլաստմասե տարաների հավաքածուներ, կավագործության, ջնարակման կամ լուսանկարման փոքր արհեստանոցներ և նման խաղալիքներ, որոնք օգտագործման ընթացքում հանգեցնում են քիմիական ռեակցիայի կամ նմանատիպ նյութի փոփոխման:

5. Երեխաների համար չմուշկներ, անվաչմուշկներ, գլաչմուշկը (միագիծ անիվներով), սկուտերներ և խաղալիք հեծանիվներ

Որպես խաղալիքներ վաճառքի հանվելիս, դեպքում, դրանք պետք է ունենան հետևյալ զգուշացումը.

“Անհրաժեշտ է կրել պաշտպանիչ հարմարանքներ: Չօգտագործել երթևեկության մեջ:”

Ավելին, օգտագործման հրահանգները պետք է պարունակեն հիշեցում այն մասին, որ խաղալիքը պետք է օգտագործվի զգուշորեն, քանի որ օգտագործողին կամ երրորդ կողմին ընկնելուց և բախումներից վնասվածք պատճառելուց խուսափելու համար պահանջվում է մեծ հմտություն: Միաժամանակ, պետք է կատարվի նշում առաջարկվող պաշտպանիչ հարմարանքների մասին (սաղավարտ, ձեռնոցներ, ծնկակալներ, արմնկակալներ և այլն):

6. Ջրային խաղալիքներ

Ջրային խաղալիքները պետք է ունենան հետևյալ զգուշացումը.

“Օգտագործել միայն երեխայի հասակին համապատասխան խորություն ունեցող ջրում մեծահասակի վերահսկողության ներքո:

7. Սննդում պարունակվող խաղալիքներ

Սննդում պարունակվող կամ սննդի հետ խառնված խաղալիքները պետք է ունենան հետևյալ զգուշացումը՝

«Ներսում խաղալիք է, խորհուրդ է տրվում օգտագործել մեծահասակի հսկողության ներքո»:

8. Պաշտպանիչ դիմակների և սաղավարտների իմիտացիա/նմանակում

Պաշտպանիչ դիմակների և սաղավարտների կրկնօրինակները պետք է ունենան հետևյալ զգուշացումը՝

«Այս խաղալիքը պաշտպանություն չի ապահովում»:

9. Օրորոցի, մանկական մահճակալի կամ մանկասայլակի երկայնքով լարերի, պարանների, թոկերի կամ քուղերի միջոցով կապելու համար նախատեսված խաղալիքներ

Օրորոցի, մանկական մահճակալի կամ մանկասայլակի երկայնքով լարերի,պարանների, թոկերի կամ քուղերի միջոցով կապելու համար նախատեսված խաղալիքները և դրանց փաթեթավորումները պետք է կրեն հետևյալ զգուշացումը.

«Խճճվելու հետևանքով առաջացող հավանական վնասվածքը կանխելու համար հեռացրեք խաղալիքը այն ժամանակ, երբ երեխան սկսում է փորձեր անել բարձրանալու ձեռքերի ու ծնկների վրա և չորեքթաթ դիրք ընդունել»:

10. Հոտառական խաղատախտակի խաղերի, կոսմետիկ հավաքածուների և համային խաղերի հոտավետ նյութերի փաթեթավորումը

Հոտառական խաղատախտակի խաղերի, կոսմետիկ հավաքածուների և համային խաղերի հոտավետ նյութերի այն փաթեթավորումը, որը պարունակում է II – րդ Ձևի 3-րդ մասի 5-րդ կետի առաջին պարբերությունում տրված ցանկի 41-55-րդ կետերում և այդ կետի 3-րդ պարբերությունում նշված ցանկի 1-11-րդ կետերում նշված հոտավետ նյութերը, պետք է կրեն հետևյալ զգուշացումը՝

«Պարունակում է հոտավետ նյութեր, որոնք կարող են առաջացնել ալերգիա»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1551-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության խաղալիքների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման նպատակը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի օգոստոսի 10-ի թիվ 763-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովման միջոցառումների ժամանակացույցի 3.3 կետի և 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 1162-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ընտրված ոլորտների օրենսդրությունը Եվրամիության մակարդակում կանոնակարգվող արդյունաբերական ոլորտների օրենսդրությանը մոտարկման ծրագրի 1-ին կետի կատարման ապահովումն է:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկայումս Հայաստանում խաղալիքների անվտանգությունը ապահովվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշմամբ, որը չի համապատասխանում միջազգային ընդունված չափանիշներին և դրա արդյունքում հայրենական արտադրանքի մրցունակությունը իջնում է և սահմանափակվում է արտաքին շուկաներ դուրս

գալու հնարավորությունը: Վերոհիշյալ որոշման ընդունմամբ ենթադրվում է բարեփոխումը այդ ոլորտում՝ մոտարկելով այն Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2009 թվականի հունիսի 18-ի խաղալիքների անվտանգության մասին N 2009/48/ԵՀ հրահանգին:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Այս ոլորտում իրականացվող քաղաքականությունը ամբողջովին նպատակաուղղված է խաղալիքների անվտանգությանը, դրանց որակի բարեփոխմանը, ԵՄ օրենսդրության մոտարկմանը և ԵՄ-ի և Հայաստանի միջև ԽՀԱԱՀ-ի շուրջ բանակցությունների մեկնարկի համար պահանջվող աշխատանքներին: Ոլորտը ԵՄ օրենսդրությանը մոտարկման համար ընտրվել է որպես առաջնային և այդ ընտրությունը առաջարկվել է ԵՄ խորհրդատվական խմբի ԱՏԽ խորհրդատուի կողմից, ելնելով այն հանգամանքից, որ խաղալիքների անվտանգության N 2009/48/ԵՀ հրահանգը Եվրոպական հանձնաժողովի կողմից արդեն իսկ վերանայված է այսպես կոչված՝ «նոր մոտեցման» պահանջների ներքո՝ համապատասխան 765/2008 (ԵՀ) և 768/2008 (ԵՀ) կանոնակարգերի, Կանոնակարգերի կիրարկումն ապահովող համապատասխան ստանդարտների քանակը քիչ է՝ 9 ստանդարտ:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Վերը նշված խնդիրների լուծման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի օգոստոսի 10-ի թիվ 763-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովման միջոցառումների ժամանակացույցի 3.3 կետի և 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 1162-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ընտրված ոլորտների օրենսդրությունը Եվրամիության

մակարդակում կանոնակարգվող արդյունաբերական ոլորտների օրենսդրությանը մոտարկման ծրագրի 1-ին կետի և ԵՄ օրենդրությանը մոտարկման աշխատանքների ապահովման նպատակով անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել ներկայումս գործող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշումը և հաստատել Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2009 թվականի հունիսի 18-ի խաղալիքների անվտանգության մասին N 2009/48/ԵՀ հրահանգին լիովին մոտարկված նոր Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Իրավական ակտի նախագծի մշակումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ԵՄ փորձագիտական խմբի հետ համատեղ:

6. Ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության խաղալիքների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կիրականացվի օրենսդրության և գործելակերպերի համապատասխանեցումը միջազգային ու եվրոպական պահանջներին: Այն ազդեցություն կունենա սպառողների պաշտպանության ոլորտի վրա այն առումով, որ և Հայաստանում և արտաքին շուկաներում շուկայահանված հայկական արտադրանքը կլինի անվտանգ՝ համապատասխան միջազգային չափանիշների, կբարձրանա Հայաստանի արտադրողների մրցունակությունը և ձեռք կբերվի հայրենական արտադրանքի միջազգային ճանաչումը:

7. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

Սույն տեխնիկական կանոնակարգը լիովին մոտարկված է «նոր մոտեցման» պահանջների ներքո վերանայված N 2009/48/ԵՀ հրահանգին, սակայն Ձև II-ի III-րդ՝«Քիմիական հատկությունները» բաժնում նշված պահանջները համապատասխանում են Եվրամիության նախկին հրարանգին, քանի որ նոր հրահանգում տրված են տարբեր հրահանգներում ներառված այլ ոչ ամփոփ պահանջները:

Ներկայումս ԱՊՀ ոչ մի երկրում չկա այդ ոլորտի կանոնակարգման օրենսդրական ակտերում քիմիական հատկությունների նոր ամփոփ պահանջները: Հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ-ում ԵՄ խորհրդատվական խմբի ԱՏԽ խորհրդատուի կողմից հարցումները ԵՄ այլ խորհրդատուներին ևս արդյունք չտվեցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1551-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության խաղալիքների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին տեղեկանքի լրացման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը
   Չի իրականացվել:

2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին
   Չի եղել:

3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

   Չկան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1551-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

   Չի առաջացնում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը

   Համապատասխանում է:

3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

   Չկան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ